

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 47/2

17 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Ջովք» ՍՊԸ 21.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300118/03 որոշման դեմ:

«Ջովք» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Ջովք» ՍՊԸ տնօրենը հայտնում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300118/03 որոշման համաձայն, ընկերությունը չի ներկայացրել 2015 թ-ի հունիս-հուլիս ամիսների եկամտային հարկի հաշվարկները:

«Ջովք» ՍՊԸ-ն իր գործունեությունը սկսել է իրականացնել 01.08.2015 թ-ից, հետևապես 2015 թ-ի հունիս-հուլիս ամիսների եկամտային հարկի հաշվարկներ ներկայացնելու պարտականություն չի կրել:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300118/03 որոշումը կարճել (անվավեր ճանաչել):

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 22.09.2015 թ-ի 637 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Ջովք» ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Զաքարյանն օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015 թ-ի հունիս-հուլիս ամիսների եկամտային հարկի հաշվարկները: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 29.09.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300118/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով «Ջովք» ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Զաքարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «Ջովք» ՍՊԸ կողմից 21.01.2013 թ-ին հայտարարություն է ներկայացվել Մաշտոցի ՀՏ՝ 21.01.2013 թ-ից գործունեությունն անորոշ ժամանակով դադարեցնելու վերաբերյալ: Այնուհետև, ընկերության կողմից

30.07.2015 թ-ին դիմում-հայտարարություն է ներկայացվել Մաշտոցի ՀՏ՝ 01.08.2015 թ-ից գործունեությունը վերսկսելու վերաբերյալ:

Վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ 21.01.2013 թ-ից մինչև 01.08.2015 թ-ն ընկած ժամանակահատվածում «Զովք» ՍՊԸ-ի կողմից գործունեություն չի իրականացվել: Ընդ որում, սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որը կվկայեր ընկերության կողմից նշված ժամանակահատվածում գործունեություն իրականացվելու վերաբերյալ: Հետևապես, ընկերությունը չի կրել 2015 թ-ի հունիս-հուլիս ամիսների եկամտային հարկի հաշվարկներ ներկայացնելու պարտականություն:

Քննարկվող դեպքում «Զովք» ՍՊԸ տնօրենը վարչական պատասխանատվության է ենթարկվել մի խախտման համար, որը նրա կողմից չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ զանցակազմը լիարժեք չէ, արարքի սուբյեկտիվ կողմի՝ մեղքի բացակայության պատճառով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300118/03 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

